

ՄԵՂՈՒԻ

ԿՐ. ՀՐԵՏԱՐԵԿՎԻ

ՉՈՐԵՔՆԱՐՈՒ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Գին տարեկան (100 թերթ) 400 դրուշ. ԿԱՆԵԻԿ: Գաւառայ համար մէկ ժամ. ոսկի: Մէկ թերթ 30 փարայ:	Լրագրոյ վերաբերեալ նամակ կամ դրուժիւն պէտք է ուղղել առ Յակոբ Յ. Պարոնեան Կ. Պօլիս Ալաճա-Համամ Խանը Խալիլ վերնայարկ թիւ 31:
Մանուցման տողը մէկ անգամի համար 3 դրուշ. մէկ կամ աւելի անգամներու համար զատ սահարկութիւն կըլլայ:	Ճամբու ծախքը չը վճարված նամակ չընդունվիր:

ԵՐՐՈՐԴ ՇՐՁՍՆ

1874 ՓԵՏՐՎԱՐ 13 ՉՈՐԵՔՆԱՐՈՒ

ԹԻԻ 210



Տեղապահ Սրբազանը՝ ինչպէս լրագրքը ցաւ 'ի սիրտ ծանուցին, ենթակայ եղած հիւանդութենէ չկրնալով աղատիլ կիրակի օրը իւր մահկանացուն կըբեց:

Երէկ խիստ շքեղ կերպով կատարվեցաւ յուզարկաւորութեան հանդէսը, որուն երկարածիգ շարքին մէջ կը գտնուէին Յունաց Պատ. Փոխանորդն քանի մը Եպիսկոպոսներով, Պուլլարաց և Հրէից կրօնական դասէն քանի մը անձինք: Քառասունի չափ ոստիկաններ բազմութեան կառաջնորդէին:

Արտորութիւնը Օրթոդոքս Եկեղեցւոյն մէջ կատարվեցան: Գեր. Մամբրէ Եպիսկոպոս դամբանական կարգաց: Վախճանեւոյն մարմինը Բուրու Չէշմէ փոխադրվելով հոն ալ Գեր. Խորէն Եպիսկոպոսը սրտառուչ դամբանական մը կարգաց:

Վախճանեւոյն մարմինը Բուրու Չէշմէի Եկեղեցւոյն մէջ թաղվեցաւ:

Պէտք է ըսել որ վախճանեալն իւր Տեղապահութեան երկու երեք ամիսները՝ որոնց մէջ բաւական ծանր խնդիրներ յուզվեցան, առանց սխալ մը գործելու անցուց:

Ժողովներուն հետ միշտ համընթաց երթալով գործեց ինչ որ կարելի էր գործըվիլ այնչափ քիչ ժամանակին մէջ, և յոյս կուտար իր Տեղապահութեան մնացած օրերն ալ ազգին օգտիցը գործածելու եթէ անագորոյն Պարկայք անոր կենաց թեղ չկտրէին:

Այսպիսի անձանց կորստեան վրայ ողբալով միայն կրնանք մխլթարվիլ:

ՎԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ՎԵՐՁԻՆ
ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՍԽԱԼԸ

Վանական խորհուրդն այս անգամ վերջին ազդարարութիւն մը կուղղէ Վանօրէից Տեսչութեանց ուրով քանի մը յորդորներ կարգաէն ետքը կը հրամայէ որ «Վանօրէից մէջ կուսակրօնութեան ուխտի տակ ժառանգաւորաց վարժարաններ բանան»:

Այս ազդարարութենէն կը հետեւի որ այդ վարժարանաց մէջ անոնք միայն պիտի ընդունվին որոնք կուսակրօն մնալու ուխտ պիտի ընեն: Բայց Վանական խորհուրդը չըսեր թէ այդ վարժարանաց մէջ մտնել ուղղները քանի տարեկանէն վեր կամ վար ըլլալու են: Ասիկայ պէտք էր ըսել, որովհետեւ որչափ որ մօրուքուր մարդիկ կան նէ՛ք բաւատուն, կամ յիսուն կամ վաթսուն տարեկան ամենն ալ կուսակրօնութեան ուխտ կրնեն և այդ վարժարանները մտնել կուզեն: Ասոնք պիտի ընդունվին: Եթէ ատոնք չպիտի ընդունվին նէ՛ որոնք պիտի ընդունվին: Տղաքները, աղայոց ուխտին ո՞վ կը հաւատայ. մէկը կուսակրօնութեան ուխտ ընել ուղերու համար գոնէ առ նուազն տասնևութ քսան տարեկան ըլլալու է որ հաւտացվի:

Արդեօք Վանական խորհուրդն ի՞նչ ուխտ պիտի ընէ որ այն ինչ տղան կուսակրօն մնայ. տղան Վանական խորհուրդոյ ուխտը մտիկ կընէ. . . .

Վանական խորհուրդը այս ազդարարութենէն ետքը՝ ճնորդաց ալ ազդարարութիւն մը խրկելու էր հետեւեալ կերպով.

«Վանական խորհուրդս որչեց որ կուսակրօն մնալու ուխտ ընող զաւակներ պատրաստէք, և եթէ սոյն որոշման դէմ վարվիք, Կեդրոնական Վարչութեան առջև իբրև ըմբոստ պիտի պատժըվիք»:

Ասանկազդարարութիւն մը խըրկելու ըլլար նէ՛ ան ատեն մենք ալ կը համոզվէինք, բայց հիմայ չենք համոզվիլ և աղբու մը կուսակրօն

մնալու ընելիք ուխտին ալ չենք հաւատար, քանի որ երբեմն երբեմն կը տեսնենք որ չափահասներն իսկ ատանկ ուխտ մը ըրած են աէ չեն կրցեր կատարել, ուր մնաց տղաքները . . . :

Կուսակրօնութիւնը տղայութիւն է Սասունածղ սիրես :

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԷՆ ԵՏԻՐ

Ինչպէս ամեն մարդ այնպէս ալ ֆաղ, ժողովը կարծես թէ բարեկենդանի առթիւ քոնի մը չարաթէ 'ի վեր դործ չտեսներ :

Ակադեմիայի խնդիրը, վարժապետանոցի խնդիրը, Իդմբի խնդիրը, Գատը դեղի խնդիրը ինչ վիճակի մէջ էին նէ՛ նոյն վիճակին մէջն են : Կարծես թէ՛ խնդիրներն ալ բարեկենդանի օրերը երեսնուն դիմակ անցուցած ճագարս եղան :

— Է՛հ, Մեղու, Աղբ. խնդիրները ո՞ր ատեն իրենց բնական դէմքովը երեցած են, միշտ դիմակով կերեանն :

Այնպէս է, տարին տասներկու ամիս բարեկենդան կընեն խնդիրները : Նախորդ վարչութիւնը Գատը դեղի խնդրոյն դիմակ մը անցուց, լրագիրք կը պոռան, կաշի խատին այս դիմակները պատուելու ֆաղ, ժողովն ալ այդ դիմակները պատուելու որոշման մասին լրագրոց հետ համամիտ է, բայց պատուելու մասին չէ : Եթէ պէտք է ճշմարիտը խօսիլ, ֆաղ, ժողովն երբեմն կազմէ կոր խնդրոյ մը դիմակը վար առնելով զայն բնական դէմքովը տեսնելու, բայց ինչ օգուտ որ, վար առած դէմքին տեղը ուրիշ դիմակ մը կանցունէ կոր խնդրոյն երեսը, և այս է պատճառը որ երբեմն խնդիրները այլևայլ կերպարանքներով կերեան :

Մենք կըսենք որ, ալ բարեկենդանը անցաւ, թող խնդիրներն ալ դիմակին վար առնեն ռօրպէս զի դիւրութեամբ լուծվին :

Այսպէս ընելու ըլլանք նէ՛ մինչև որ միւս բարեկենդանը դոյ բաւական դործ կը տեսնենք, չէ նէ, առջի եղանակով մինչև որ դործելու պատրաստովինք նէ՛ ետեւէն միւս բարեկենդանը վրայ կուգայ և բան մ'ալ չենք կրնար ընել :

Բարեկենդանէն ետքը պէտք է որ ազգային դործը ուղղութիւն մը տրվի : Արդէն վերաքննիչ Յանձնաժողովը Սահմանադրութիւնը վերաքննի և լմացուցեր է, հիմայ ընդհ. ժողովին կը մնայ այդ վերաքննութիւնը կարճ վիճաբանութեամբ ընդունիլ և Պատրիարքի մը ընտրութեան սխիլ :

Վերաքննութեան վրայ վիճաբանված օրը Պէկեան հարկաւ իւր լուծութիւնը չլլանար 'ի սէր ազգին և կամ իր կարծիքը կարճ խօսքերով պզտիկ բառերով և մաքուր լեզուով բացատրելու կը խոնարհի, և ոչ թէ Ղալաթիոյ խորհրդարանին մէջ ան :

ցեալ շարժութեան Մեղուի դէմ խօսած հայհոյաբառ լեզուով, որովհետեւ այդ լեզուն պատիւ չբերեր Պէկեան էֆէնտիին :

Մենք ոչ թէ չենք բարկանար, այլ կարդարացնենք Պէկեան էֆէնտիին այդ լեզուն իր անկրթութեանը տարով, և յուսով ենք բարեկենդանէն ետքը այդ անկրթութեան մէջ չգտնելիք, ինչպէս նաև ընդհ. ժողովին մէջ ալ միւս երեսփոխանաց պէս և չափ խօսելով չտարբեր զմեզ մեր պարտքը կատարել, իմա իր անիմաստ խօսքերը ծաղրել :

ԽԱՅԹՈՒԱԾՔ

— Դուրս կ'ընես 'կոր նէ իմաց չես տար, իրիկուան ինչ պիտի ուտենք :

— Երեկ գիշերու ընէ մնացածները :

— Երեկ գիշեր ինչ ունէինք որ աւելնար, աւելնար ալ նէ կուտվի՞ր, սոսոր պահք է :

— Ի՞նչ առնենք :

— Ի՞նչ գիտնամ, քանի մը օխա ֆառուէս խրկէ, քանի մը օխա ղէթի, քանի մը օխա ղէթիէն ետքը, քիչ մ'ալ խաղն կելլասի, քանի մը օխա նօհոմ . . .

— Քանի մը օխա նօհոմ կելլասի կամ նօհոմ ետքի :

— Նօհոմին ետքը հէշվան կըլլամ մի :

— Ի՞նչ գիտնամ, ղէթին ըսիր է՞ տեւէն ղէթին ետքը կոխեցիր. խաղն ըսիր, ետեւէն խաղն կելլասի դրեր . . .

— Քանի մը օխա քաշա, քիչ մը պամբա, զոյգ մը պօթին, շալ մը, քանի մը էնտաղէ տանթէլա, քիչ մը սոխ, սխտոր, մեծ պահք է, թող տունին մէջ գտնելիին :

— Բօթինը, շալը, տանթէլան կերակուրի մէջ պիտի դնես, ըսենք քի միւսները պահքի կերակուր պիտի շինես ու պէտք են, պօթինը ինչ պիտի ընես, միւս պօթինները ուտիքի պօթին են, հէմ սոսոր ժամանակ չունիմ բան առնելու :

— Անանկ է ամմա, տղաքները ժամանակ ունին ու տերու, անօթի չպիտի մնան ես :

— Երեկ գիշերու ընէ պանիր ալ չմնաց, թող հացով ուտեն :

— Պանիրը կուտվի՞ պահք է :

— Ես Տէր երեմիային կերթամ կըսեմ որ մեծ պահքը քանի մը օր երկարաձգէ . . . :

* * *

Դրամի չղայութիւնը սկսաւ կամայ կամայ չափէն աւելի զգալի ըլլալ :

Ամեն մարդ փոխառութիւն ընելու համար բարեկամին կը դիմէ, բայց բարեկամը չկրնար գտնել, ոչ ըսվհետեւ ան ալ իր բարեկամին գայեր է փոխառութիւն ընելու : Հիմակու հիմայ ամենուս յոյ :

որ փոխառութեան վրայ է՞, Սասունած վերջերին բարի ընէ՞ :

Մեղուն ալ, եթէ բաժանորդներէն չկարենայ ստակ հաւաքել, միտք ունի փոխառութիւն մը ընելու. և այս փոխառութիւնն ալ ոչ թէ իրեն համար պիտի ընէ, այլ խեղճ մէկու մը համար որ եկաւ այս օրերս մեր օգնութիւնը խնդրելու : Աւելորդ չենք համարիր ըսել որ այս մարդը անցեալները Մանգու մէին գացող մարդն է : Գիտենք որ լրագիրք սմանք չպիտի հաւտան ասոր և պիտի կարծեն թէ մեղի համար կուղենք կոր ստակ հաւաքել : Թող կարծեն, մեղքը ճիտերինն :

Մենք անանկներուն ըսելիք չունինք :

Իսկ մեր ունեցած դրամի ներդրութիւնը թեթեւեղութեամբ պիտի պարտաւորինք որ մեր քովը ըստակն առատ ընենք, և աս ալ ուրիշ կերպով չըլլար, եթէ ոչ մեր քովը գտնելած դրամներուն արժէքը աւելցնել, տասնոցը քառասուն փարայի տեղ և քառասուն փարան ալ չորս զուրուշի տեղ տալ :

Թող ուրիշներն ալ մեր օրինակին հետեւին, ստակին շատցունեն և պարտերնին սան :

Արդէն քանի մը ատենէ 'ի վեր այս կերպով կը վճարվին կոր պարտքերը : Դրամին արժէքը աւելցնելը պարտքը զեղջել ըսել է . . . :

* * *

— Եղբայր դուն դրողութիւն կընես կոր եղեր :

— Այո :

— Դուն առաջ խոհարար էիր նէ :

— Այո խոհարար էի, բայց օր մը ազէկ կերակուր եփեր էի, տէրըս հաւնեցաւ, խոհարարութենէ հանեց սենեակը տարաւ, ամսակա նրս աւելցուց դրողիւր ըրաւ :

— Կրնաս կոր ընել :

— Չեմ կրնար կոր, առջի օրը սխալմունք մը ըրի և կարծեմ՝ ճամբայ պիտի տան . . . :

Յանցանքը խեղճին չէ այլ Տէր ըրջը. կերակուրին հաւնեցաւ նէ, թող խոհանոցի պէտ ընէր և ամսականն աւելցնէր ու հիմայ ալ չճամբէր . . . :

Ասանկ անյարմար պաշտօնաւ բաշխութիւնները նոր չեն, հիներուն մէջ ալ կը տեսնենք :

Նաբուգոդոնոսոր երազ մը 'կը տեսնէ. Գանիէլ այս երազը կը մեկնէ, Նաբուգոդոնոսոր զինք իրեն երկրորդը կը կարգէ :

Նաբուգոդոնոսորին տեղը ես ըլլայի նէ Գանիէլը երազագէտ կանուանէի :

* * *

Այս օրերս Յոյնք Խսկիւտարու գերեզմանատան մէջ իրենց ասկից

—Օգուտուղու բէք ալեա ան... լաշըրաճադ ամնն, հօթէքի գոյ վէրմէյօր քի...

—Էջլէ ես, եա օ սէջլէսին եա օ պիրի:

—Մէյէր պու տա գանուէն թահ... թընտա իմիչ, տէֆթէր օգուէնմու...

—Օյուննու պաշտար Մամուէ... կիպի քէնտինի մէթի իթմէյէ, Օրա...

—Էյի եա, շէջլէ եաբմը պէյ... լէ եաբմը իմիչ, պիրիմ նէ իւսթիւ...

—Օ եաթմագտա օրուէն, բէր... տէնին արքաւորնատն պիր գըղ չըգ...

—Կէօղլէրի նէրտէ իմիչ:

—Օյունու իգթիզարննա եա... բըմ սաաթտան սօնրա կէօրմէսի լա...

—Պայըմը օլան լաֆ իտէր մի... եա:

—Պիրիմ պիրտիպիմիզ կթմէմէլի... ֆեգաթ պունըրն ուսուլիննէ ի...

—Տիւղճէ Էհալլի չօճուք եէ... ընէ քոյմաք տըր պու:

—Հէր նէ իտէ: Պու իքիտի պաշ... լատըր պիրպիրլէրլէյէ սէյլէմէյէ,

սէյլէչաթիքտէն սօնրա իչէրի կիրտի... լէր, բէրտէ պիր գաշ տէֆալար...

—Ստամ գալմամը քի օյնատըն: —Եօք, Էկէր Էօլմէյէլաթիլէր...

—Օյունու իտի նէ իտի:

—Տօղրուսու մէրաք էտիպ սօր... մատըմ: Օյուն պիրթաթիքտէն սօնրա...

—Էհալլի թէղ էլտէն Պէյ օղ... լու թէաթրօսուէն նաթլ իտիպ օր...

—Նիհայէթի, քոմէտիպ օյնա... մատըր, վէ պիղ տէ գալըտըգ...

—Թէաթրօ տէտիքլէրի պո... մույմուչ:

—Պէնիմ կէօրտիւղիւմ պու... տիւղճէ Էհալլի չօճուք եէրինէ...

—Տօղրուսու պէն օրտա օրսամ... սապը իտէմէմ, պիր գաշ լաֆ իտէ...

—Օտուէն փարչատընը պըպ... կիւյա գըրճ տըր կիպի կէօյիւլէրի...

—Էֆէնիտիմ, Էհալլիմիզ տէ ճա... հիլ:

—Հէր նէ հալ իտէ, պու կիւն... էքէն գալըպ տա գարըյան պադ...

—Օ գօլպ: Սանա պիր բիճամ... վար, շու թէաթրօտա կէօրտիւք...

—Էլվիթ:

—Պէնիմ Էօնիւմտէ եաբ պիր... կէօրէյիմ:

—Եալընը օլմաղ, գըղ լաղըմ... ուշագ լաղըմ, գալապալըգ օլմալը:

—Պէ ճանըմ գարընը պըրօրն... Էկէր չօք ատամ իքթիգա իտէր իտէ...

—Փէք էյի, Եարըն տէյիլ օ պիր... ագչամ պույու բուն:

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ՕՐԱՅՈՅՑ

1874 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Չարգարեան գործարանէն ՚ի... լըս ընծայված այս օրացոյցը որու...

ԲԵՂՊԵՐԻ ԼԻՍԱՆԸ ԹՈՒՐԻԲԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ԹՈՒՐԻԲԻ . ԼԵՁՈՒԻ

ՔԻԹԱՊԸ ԹԱՍԸ (ԳԻՐՔ Թ)

ԳԱՎԱՅԻՏԻ ԱՐԱՊԵՏԷ

(Բառագիրտութիւն Արարերէն)

Կրկն-Էն Տաճկան լէր-ի անուն... գասագրիս յառաջաբանութեան...

Բանաւոր առիթներով ՚ի սկըղ... բան սոյն իններորդը (բառագիրտ...

Գ . ԳԱԼՔՊՅԱՆ

ՊԱՁԷՆ ՄԱՐԱՋԱԽՏԻՆ

ԳԱՏԱՍՏԱՆԸ

ԳԱՂԴԻԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Մ . Խ . ԵՏԵՆԻՃԵԱՆ

Մաս առ մաս հրատարակիլը... կըսած ըլլալով 16րդ տետրն ալ...

ՏԷՐ ԼՐԱԳՐՈՑ Յ . Գ . ՍԸՎԱՃԱՆ

ԽՄԲԱԳԻՐ — ՏՆՕՐԷՆ

Յ . Յ . ՊԱՐՈՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ . ՄԻԻՆԷՆՏԻՍԵԱՆ